ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Գործառույթներ.

Բաժնի առաջատար խորհրդատուն՝

1) Մասնակցում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի ներկայացված գույքերի իրացման գործընթացի կազմակերպմանը.

2) Ապահովում է Ծառայության աշխատակիցների կողմից իրականացվող կատարողական գործողությունների օրինականության նկատմամբ հսկողության գործընթացը.

3) Մասնակցում է միատեսակ իրավակիրառ պրակտիկայի մեթոդաբանության մշակմանը՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքին, «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան.

4) Բաժնի կանոնադրական խնդիրների և նպատակների շրջանակներում նախապատրաստում է քաղաքացիներից և իրավաբանական անձանցից, պետական մարմիններից ստացված դիմում-բողոքների պատասխան գրություններ և կազմում այլ գրությունների նախագծեր.

5) Կատարում է բաժնի կանոնադրությամբ սահմանված և (կամ) Բաժնի պետի կողմից իր իրավասության սահմաններում տրված այլ հանձնարարականներ.

2. Պաշտոնին ներկայացվող պահանջները.

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության աճուրդի կազմակերպման բաժնի առաջատար խորհրդատուի պաշտոնում նշանակվելու համար աշխատանքային ստաժ և աշխատանքի բնագավառում փորձ չի պահանջվում:

Պաշտոնին նշանակվելու համար մասնագիտական պահանջները սահմանված են ՀՀ փոխվարչապետի 2020թ. հուլիսի 30-ի թիվ 461-Ն որոշմամբ: